իշխան որդի Մարզպանին՝ եղբայր Ասլան պէկին, Սարգսի եւ Ամիրային յազգէ Մամիկոնէից», որ իրեն տեղեկութիւններ է հաղորդել Թաթարների կրօնի և սովորութիւնների մասին. մի երկրորդ անգամ յիշում է եղբայրներին, երբ առիթ է ունենում խօսելու Վաչուտեան Քուրդ իշխանի և նորա կնոջ Խորիշահի մասին՝ «յազգէ Մամիկոնէից, դուստր Մարզպանայ՝ քոյր Ասլան պէկին եւ Գրիգորոյ»։ Մարծպանի՝ «որդի Սարգսի թոռն Համազասպեանց յազգէ Մամիկոնեանց», և նորա որդիների յիշատակութեամբ բազմաթիւ արձանագրութիւններ ունինք այլ և այլ վանքերում. Գօշայ վանքի մի արձանագրութեամբ՝ «Ես Մարզպան իշխան եւ որդիք իմ Ասլան բէգ եւ Գրիգոր միաբանեցաք ս՟ Աստուածածնիս» և տալիս են Ողջաբերդում մի այգի ևլն. «ազատ յամէն հարկէ»(1)։ Դսեղի Ս. Յարութիւն և Ս. Գրիգոր (Բարձրաքաշ) եկեղեցիների բազմաթիւ արձանագրութիւններից երևում է, որ այդ վայրը նրանց իշխանութեան կեդրոնն էր, տոհմի ուրիշ իշխանների հետ նաև վերոյիշեալ Մարծպանի և նորա որդիների շինարարութեան, նուիրատուութեան և անունների յիշատակութեամբ(2)։ Հէնց մեր այս «Գրիգոր որդի Մարծպանայ» իւր հօր մահուանից յետոյ տալիս է վանքին Գրիգորաշէն գիւղի հետ «Սիրեկայ գոմոց տափն եւ մեծ կռավարն, Ագատակի փայտաշէնու կէսն, զաւագ սուրբ նշանն, աւետարան պատուական, գրեան եւ զարդ եկեղեցոյն եւ այլ արդիւնք»։ Սոյն արձանագրութեան մէջ յիշուած է և նորա ամուսինը Մամքան, որով այլ ևս տարակոյս չի մնում, թէ մեր յուշարձանի և Աղքիլխայի արձանագրութիւնների Գրիգորն ու Մամքանը և թերի արձանագրութեան Մարծպանի որդին ովքեր են։ Նրանք Մամիկոնեանց տոհմից էին, որ Դսեղի և շրջակայքի հետ, կալուածներ ունէին նաև Վեդիի վերին ակունքներում՝ Մանկուսի և Ճերմանիսի ձորերով, որ հաստատում է արձանագրութիւններով և ձեռագրական յիշատակարաններով(3)։

(1) *Ազգ. Հանդ.* X. 24։

(2) *Դրի ենք առել եւ լուսանկարել անձամբ. համ. Ջալ. Ա.* 117. 24. 110. 112։

(3) *Տոհմի պատմութեան եւ շինարարութեան մասին ունինք առանձին աշխատութիւն (ԺԳ. դարից սկսած)։*

Մամիկոնի յիշատակութիւնն ունինք նաև Դսեղի «Սիրուն Խաչ»ի արձանագրութեան մէջ, որ կանգնել է ոմն Հայրադեղ որդի Թէրին (պատկ. 40).

1\. *Իշխանութ̂ե̂ն ։ Մամիկոնին եւ որդոյ նորայ Վարզանայ ։ ես Հայրադեղս որդի Թէրի*
2\. *ն կանկնեցի ս՟ տ՟րունայկանս յի*
3\. *շատակ ինձ եւ Ասլանբէկին եւ ծնողաց մերոց որք երպագէք*(1).

Սիրուն խաչը անթուական լինելով՝ կարելի է մտածել, թէ, գուցէ, կանգնած է նա սոյն Մամիկոնի նոյնանուն թոռնորդու ժամանակ. Ներքին Մանկուսում, գիւղից դուրս, դէպի Ջիմ տանող ճանապարհի եզերքին, ուրիշ խաչքարերի հետ՝ կայ և մէկը, դեռ ևս կանգուն, 1,3×0,85 *մ. մեծութեամբ, որ հետևեալ արձանագրութիւնն ունի.*

Ես Արղունս թո(ռ)
ն մեծին Մա(մի)
կոնա ապարա
պետին կանկ(նեց)
ի զխաչս ի փր(կու)
(թ)ի ինձ որդիմոյ (s!)
Մամիկոնա եւ ամուսո (s!)
իւր Խաթունին(2)։

Բայց Սիրուն խաչի ազնիւ արուեստը աղաղակում է որ նա ԺԳ. դարի գործ է և ոչ ԺԴ. դարի վերջին տասնամեակների, երբ մօտաւորապէս պէտք է ապրած լինէր Արղունի որդի Մամիկոնը։ Աւելացնեմ, որ այս ժամանակ Դսեղում այլ ևս շինարարութեան մնացորդներ չկան, երևի, տոհմի նուազելու և աղքատութեան պատճառով, որպէս հետևանք մոնղոլական պետութեան անկման յաջորդող խառնակ ժամանակի և Լանկթամուրի արշաւանքների։ Արձանագրութեան մէջ յիշուած Ասլանբէգը հաւանօրէն Մարծպանի որդի և Գրիգորի եղբայրն է համանուն Մամիկոնի հօրեղբայրը։

(1) *Այսչափ է արձանագրութիւնը։ Խաչարձանի բարձրութիւնն է* 2,37 *մ., լայնըը* 1 *մետր, վերեւի պատուանդանը. որի վերայ հաստատուած է խաչը* 1,32×0,7 *մետր. երկրորդը* 1,34×0.48 *մետր. երրորդը* 1,5×0.35 *մետր։*

(2) *Փակագծի մէջ առնուածները փճացած, մենք ենք աւելացնում։*